

“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԹ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1900

ԹԻԻ 6




ՊԱՀՈՒՄ ԳԱՆՁ

Մատթէոսի Աւետարանին յ. Գ. գըլխուն մէջ մեր Տէրը առաւելներու միջոցով շատ մը բաներ կ'ըսէ երկնից թագաւորութեան վրայ: Այս առակներէն մէկը կը գտնուի յիշեալ գլխուն 44 համարին մէջ. «Երկնից թագաւորութիւնը արտի մէջ պահուած գանձի նման է, որ անհկա մէկ մարդ մը գտնելով կը ծածկէ, և ուրախութենէն կ'երթայ բոլոր ունեցածը կը ծա-

մարդոց սիրտերուն մէջ, գայլը: Առակէն կը սորվինք նաև թէ այս թագաւորութիւնը ծածկուած է ու մանց աչքերէն: Աշխարհի մէջ կը գտնուին մարդիկ որ չեն տեսներ աշխարհի ամենէն աղէկ բանը: Անոնք զՍտուած չեն գիտեր, չեն տեսներ սուրբ կեանքին և Ստուծոյ և մեր ընկերներուն սիրով ծառայող կեանքին գեղեցկութիւնը: Բայց մենք կըլնանք գտնել այս գանձը, և իրօք ու-

նինք խոտման վատահելի խօսքը. «Փնտռեցէք ու պիտի գտնէք:» Եւ եթէ գտնենք, եթէ ճշմարտապէս մեր սիրտերուն մէջ ընդունինք այս թագաւորութեան օրհնութիւնները, ուրախութիւնով պիտի լեցուինք: Թերևս պէտք պիտի ըլլայ ծախել մեր ունեցածը զանհկա ստանալու համար. այսինքն պէտք պիտի ըլլայ տալ մեր զբօսանքներէն և գործերէն մէկ քանին որ Ստուծոյ կամքին հակառակ են: Բայց ինչ որ պիտի շահինք հոգևորապէս, բոլոր մեր տուածներէն անհունապէս աւելի կ'արժէ: Եւ երբ կեանքին վերջին համինք, կարևոր հարցումը պիտի չըլլայ, գտանք աշխարհային հարստութիւն և պատիւ, գտանք տուններ, խանութներ և արտեր, այլ գտանք պահուած գանձը:




ՄԻԱՅՆ ՄԵԿ ԱՆԳԱՍ

Երբեմն մարդիկ, երբ գէշ բան մը կ'ընեն, Միայն այս անգամ պիտի ընեն, կ'ըսեն: Բայց մէկը ըսած է թէ շատ մը աւելի դիւրին է գտնել մարդ մը որ երբեք գէշ բան ըրած չէ, քան գտնել մէկը որ միայն անգամ մը ըրած է: Ամէն մէկ սուտ որ կը խօսուի, աւելի կը դժուարացնէ ճշմարտութիւն խօսիլը, և աւելի կը դիւրացնէ յաջորդ անգամ ուրիշ սուտ մը խօսիլը: Ամէն չար գործ յաջորդ չարութիւնը գործելը աւելի դիւրին կ'ընէ, մինչև որ վերջապէս կը կազմուի ունակութիւն մը զոր անկարելի կ'ըլլայ ջնջել: Երբեմն կը տեսնէք մարդ մը որուն մատերը միշտ ծռած են, ոչ անոր համար որ ծուռ մատերով ծնած է, հապա անոր համար որ իր մատերը այնչափ երկար ատեն ծուռ կեցած են գործելու ժամանակ: Մատերը ալ այնպէս սովորած են այդ դիւրին, որ անկարելի է շիտկել առանց ցաւի: Այսպէս ալ կան ծուռ տղաք և

աղջիկներ, որոնք ունակացած են ծուռ գործեր ընելու, և երբեք չթուիր թէ կարող են շիտակ գործ ընել: Մինչև անգամ հանդերձները կը թուի թէ կը վարժուին այսինչ ծաղքերն ունենալ միևնոյն անձէն հազնուելով, այնպէս որ գրեթէ անկարելի կ'ըլլայ զանոնք նորէն շիտկել: Եւ եթէ այս ճշմարիտ է, ուրեմն ի՞նչպէս կարևոր է որ տղաք ու աղջիկներ գործերու շիտակ կերպեր ընտրեն: Երբ բան մը պիտի ընես, հարցուր դուն քեզի թէ կ'ուզես միշտ միևնոյն կերպով ընել:

ուի թէ հին Պարսիկները և Արաբացիները իրենց սոմարին մէկ մասը այսինչ թուշուններուն վերադարձին ժամանակէն կը հաշուէին: Թուշուններուն տեղափոխութեան պատճառը անոնց կերակուր փնտուելը կը կարծուի: Օրինակի համար, Հիւսիսային Բևեռի կարճ ամառուան մէջ առատ մանր պտուղներ կան զորոնք թուշուններէն ունայր շատ կը սիրեն: Բայց եթէ թուշունները հոն մնան ձմեռը, անօթութենէ կը մեռնին: Թուշուններէն ունայր շատ արագ կը թուշին, և զա-

որ չեն տեսներ զանիկա անոր թափանցիկ ըլլալուն համար, և կը սպաննուին հարուածէն: Կ'երևնայ թէ փարոսին պահապանը կը սպասէ որ իր ուռկանով բռնէ ուտող թուշուն մը:



ԾԵՐՈՒՆԻ «ԿԱՊՈՅՏ»-ԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ  
 Լոնտոնի տեսարաններէն մին է «Գրիստոսի Հիւանդանոց»-ին կապուտազգեստ տղոց թափօրը: Ամէն օր ժամը Կին (Ը. Ե.) ատենները կը ըսուի փողին ձայնը, և ահա եօթը հարիւր բայց զուլս տղաք իրենց երկայն կապոյտ վերարկուններով, դեղին գուլպաներով և ծնրակապերով, իսկոյն կը ընցուին մեծ սրահին մէջ և թափօր մը կը կազմեն: Նուազախումբը սրահին մէջ Սկովտական յուզիչ եղանակ մը կը զարնէ, և տղաք հոժ թափօր մը կազմելով կը քալեն ընդարձակ սրահին մէջ, ուր կէս օրուան ճաշը կը տրուի: Քարողիչ մը բարձր ամպիտի վրայ կանգնած՝ կարճ աղօթք մը կ'ըսէ, և կապուտազգեստ տղաք երկու անգամ «Ամէն» ըսելէ ետև զուարթութեամբ կը սկսին դործել դանակներով և պատառաքոյններով: Պարզ բայց հետաքրքրական հանդէս մին է այս, և ամէն օր խումբ մը հանդիսատեսներ կը զննեն զանիկա: Շատ չընեն, այս հանդիսատեսներուն մէջ արեւէն թուխցած երեսով ճանապարհորդ մը երեցաւ, որ սրահին մէջի այս շարժումները կը դիտէր մեծ հետաքրքրութեամբ և զլիսաբաց: Երեսը կը վառէր մեծ եռանդով մինչ նուազախումբը Սկովտական քայլերգը կը զարնէր, և մարդը ոտքերու դոփինով անոր կը հետևէր: Տեսնելով որ իր շարժումները կը դիտուէին ներկայ գտնուող երկու անձերէ, քանի մը վայրկեան ետքը անոնց ըսաւ նրբանցքին մէջ. «Գիտնալու էք թէ ես ալ «կապոյտ» էի և Աւստրալիայէ հոս եկայ հին դպրոցս տեսնելու համար»: Մարդը յուզումով մտիկ ըրած էր աղօթքները և «Ամէն»ները, բայց զուլսը ծանրութեամբ շարժած էր, իբր դժգոհութեան նշան, տղոց ճաշերու սկսած ատենը: «Երգը չերգեցին», ըսաւ, «անիկա միշտ կ'երգուէր իմ ատենս: Աղօթքներէն ետքը և ճաշէն առաջ աղուոր հին երգ մը կ'երգուէր իբրև սեղանի օրհնութիւն: Կը ցաւիմ որ թողուեր է այն հին սովորութիւնը: Էս աշխարհ պտրտեցայ», շարունակեց մարդը, «և կեանքին դժուար

Եթէ անգամ մը ընես այնպէս, պիտի ընես երկու անգամ: Եթէ երկու անգամ ընես, հաւանօրէն տասն անգամ ալ պիտի ընես: Ամենէն աղէկ կերպն է մէկ անգամ իսկ չընել շար գործ:

ԹՈՒՉՈՒՆՆԵՐՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ  
 Թուշուններուն տեղափոխութիւնը, այսինքն անոնց ամառը դէպ հիւսիս և ձմեռը դէպ հարաւ խումբով ճամբորդելը շատ հետաքրքրական բան է, և մարդոց ուշադրութիւնը գրաւած է շատ կանուխ ժամանակներէ ի վեր: Երեմիա մարդարէ իր գիրքին Ը գլուխ 7 համարին մէջ կը յիշէ զայն: Եւ կ'ըս-

նոնք դիտողները կ'ըսեն թէ թուշուններ կան որ ժամը 300 հազարամթր կը թուշին: Բայց այս հաշիւը ստուգութեան կարօտ է: Կ'ըսուի թէ թուշուններէն իրիստ շատեր, մասնաւոր ձագթուշուններ, կը մեռնին յոգնութենէ, մասնաւորապէս երբ մեծ ծովէ, ինչպէս Միջերկրական ծովէն, կանցնին: Նաև կան գիշատիչ (միս ուտող) թուշուններ, որոնք ճամբան անոնց կը սպասեն, և կը պակսեցնեն անոնց թիւը: Այս պատկերը կը ցուցնէ թէ թուշունները մութ գիշերուան մէջ ի՞նչպէս կը հրապուրուին փարոսէն: Մանր թուշուններ շատ անգամ կու գան կը զարնուին փարոսին ապակիին, ինչու

վայրկեան ետքը անոնց ըսաւ նրբանցքին մէջ. «Գիտնալու էք թէ ես ալ «կապոյտ» էի և Աւստրալիայէ հոս եկայ հին դպրոցս տեսնելու համար»: Մարդը յուզումով մտիկ ըրած էր աղօթքները և «Ամէն»ները, բայց զուլսը ծանրութեամբ շարժած էր, իբր դժգոհութեան նշան, տղոց ճաշերու սկսած ատենը: «Երգը չերգեցին», ըսաւ, «անիկա միշտ կ'երգուէր իմ ատենս: Աղօթքներէն ետքը և ճաշէն առաջ աղուոր հին երգ մը կ'երգուէր իբրև սեղանի օրհնութիւն: Կը ցաւիմ որ թողուեր է այն հին սովորութիւնը: Էս աշխարհ պտրտեցայ», շարունակեց մարդը, «և կեանքին դժուար

բուժիչները տեսայ, անոր փորձու-  
թիւններուն հանդիպեցայ, և ամէն  
անգամ զիս ուղիղ ճամբու մէջ պա-  
հողը դարձրին այդ Ս. Ա. Է. Ն. ներք  
և եր-  
գերն եղած են: Ես առանց բնակա-  
րանի որք մըն էի երբ առաջին ան-  
գամ դարձրոց եկայ և դարձրոցին համա-  
զգեսաբ հագայ. և միայն հոս սորվեցայ  
աղօթքներ ու հոգևոր երգեր: Շատ  
անգամ, երբ ցաւալի կերպով կը փոր-  
ձուիմ չար ընկերներէ, կամացուկ մը  
կ'ըսեմ 'Ս. Ա. Է. Ն.', և երգի մը եղանակ  
կը սուրեմ: Զանա-  
ցած եմ միշտ ճշմա-  
րիտ կապոյտ մնալ:  
Միայն քսանըտորս  
ժամ կ'ընէ Լոնտոն  
գալս, և այս է ա-  
ռաջին տեղը զոր  
կ'ուզէի տեսնել—  
հին դարոցս: Բայց  
կը ցաւիմ որ ճաշէն  
առաջ ա' չերգուիր  
հին երգը: Հոգևոր  
երգերու հին եղա-  
նակները իմ վրաս  
աղէկաղբեցութիւն  
ըրած են:”

Այս գէպքը կը  
ցուցնէ թէ հին և  
կանոխուան բա-  
ները ինչ ներգոր-  
ծութիւն կը թո-  
ղուն մարդուս վրայ:  
Շատ կեանքեր փրկ-  
կուած են մանկու-  
թեան տպաւորու-  
թիւններուն կենդանանալովը յիշողու-  
թեան մէջ: Մօր մը սիրոյն, ճշմարիտ  
բարեկամի մը օրինակին և առտնին  
կեանքի մարուր և փափուկ աղբեցու-  
թեան յիշատակութիւնները շատ թա-  
փառականներ ազատած են մեղքէ և  
յուսահատութենէ:


ՊԱԼԹԻԿԵԱՆ ԶՐԱՆՅՔԸ

Գերմանիոյ կառավարութիւնը Հիւ-  
սիսային ծովն ու Պալթիկ ծովը միա-  
ցընելու համար ջրանցք մը բացած է  
որ լննցաւ 1895 ին, 8,000 գործաւոր-  
ներու 8 տարի աշխատելէն ետքը:  
Այս ջրանցքը դարուս վերջին կէսին  
կարևոր ճարտարագիտական գործե-  
րէն մին է, թէպէտ աշխարհի վաճա-  
ռականութեան վրայ Սուէզի ջրանց-  
քին չափ աղբեցութիւն չունի: Պալ-  
թիկ ծով գացող շոգենաւ մը 237  
մղոն և գրեթէ մէկ օր կը շահի երբ  
ջրանցքէն կ'անցնի: Զրանցքը 61 մղոն  
երկայնութիւն և յատակին վրայ 85

ոտք լայնութիւն և 28 ոտք ջուրի խո-  
բութիւն ունի, այնպէս որ շատ խո-  
շոր նաւեր կրնան անցնիլ անկէ: Նա-  
ւերուն թոյլ շտրուիլ ժամը 5 մղո-  
նէ (8 հազարամետր) աւելի երթալ  
ջրանցքին մէջէն: Զրանցքը ելեկտրա-  
կան լոյսերով կը լուսաւորուի, ուստի  
նաւերը գիշերն ալ ցերեկուան պէս  
կրնան երթևեկել: Առաջին պատկե-  
րին մէջ տեսնուած կամուրջը կրուն-  
թալի վրայ է, որ Հիւսիսային ծովուն  
աւելի մօտ կը գտնուի: Միւս պատ-  
կերը կը ցուցնէ  
ջրանցքը Հոյթէնա-  
ուի մէջ որ Պալթի-  
կի ծայրին մօտ է:

ՓԱՅՏԷ ՍՐՈՒՆՔՈՎ ՄԱՐԻԸ

Շարաթ առա-  
ւօտ մըն էր, գի-  
շերը բաւական ձիւն  
եկած էր: Այս եր-  
կու բաները շատ  
յարմար էին Գա-  
նիկին: Ուստի նա  
խաճաշէն անմիջա-  
կէն



պէս ետքը բալխիրը դուրս հանեց աղէկ  
ժամանակ մը անցընելու համար: Բայց  
երբ դուռը եկաւ, կանգ առաւ զարմա-  
ցած: Նոր եկած ձիւնին վրայ տարօրի-  
նակ նշաններ կային: Մարդու մը ոտքին  
նշանը կար, խոշոր բան մը, և մինչ պէտք  
էր որ անոր նման ուրիշ մըն ալ կենար,  
բողբակ ծակ մը կար անոր տեղը: Եւ  
մինչև փողոցն ի վար այս տարօրինակ  
հետքերը կ'երևնային: Գանիկ քանի  
մը վայրկեան նայեցաւ անոնց վրայ,  
յետոյ անոնց հետևեցաւ ճամբան,  
անկիւնէ մը դարձաւ անոնց հետ, և  
չարունակեց մինչև որ նշանները զինքն  
առաջնորդեցին գէպ ի Մր. ճոնսընի  
նպարեղէններու խանութին դուռը:  
Նշանները չկային դրանը ճիշդ առջևը,

ինչու որ Մր. ճոնսընի աչկերտը ձիւ-  
նը անկէ աւրած էր. բայց տարակոյս  
չկար թէ այդ նշաններն ընողը խա-  
նութին ներսը կը գտնուէր, ինչու որ  
անկէ դուրս ելլելու նշան չէր տես-  
նուեր ձիւնին վրայ: Գանիկ վարանե-  
ցաւ քիչ մը: Կ'ուզէր ներս մտնել,  
բայց կեցաւ. ձիւնին մէջ տպաւոր-  
ուած այդ նշանները իրեն զարմանք  
կու տային: Մինչ այսպէս կը մտածէր  
անոր վրայ, խանութին դուռը բաց-  
ուեցաւ և մարդ մը դուրս ելաւ, խո-  
շոր մարդ մը զուարթ դէմքով: Հին  
կապոյտ վերարկու մը հագած էր օ-  
ձիքին (եագա) վրայ կնդուղով (գու-  
գուլէթա) և ձեռքը լեցուն էր ծրար-  
ներով: Բայց Գանիկ բոլոր ասոնք հա-  
զիւ տեսաւ առաջին անգամ: Իր աչ-  
քերը, որ միշտ խոշոր էին, հիմա սո-  
վորականէն աւելի խոշորցած էին, և  
ուղղուած էին մարդուն սրունքներուն  
վրայ, ինչու որ անոնցմէ մին, ծուն-  
կէն վար, իրաւ սրունք չէր, հապա  
փայտէ շինուած բան մը, և փոկերով  
(գայիշ) իր տեղը հաստատուած էր:  
Եւ Գանիկ իսկոյն հասկցաւ թէ ձիւնին  
վրայի ծակերուն պատճառը այն էր:

“Էհ, փոքրիկ ար-  
շայ” ըսաւ մար-  
դը խոշոր, զուարթ  
ձայնով մը, քանի  
մը վայրկեան ետքը  
մինչ Գանիկ փայ-  
տէ սրունքին վրայ  
կը նայեր և ինք  
Գանիկին վրայ կը  
նայեր, “ասանկ  
բան երբեք տեսած  
չէիք:” “Ոչ, պա-  
րոն,” ըսաւ Գանիկ,  
քիչ մը շփոթած, և  
վախնալով թէ ան-  
կրթութիւն մը ը-  
րած կ'ըլլար, ա-  
ւելցուց, “ներեցէք  
ինձի:” “Ոհ, ան-  
չուչտ. աղէկ մը նա-  
յէ անոր վրայ որ-  
չափ կ'ուզես,” պա-  
տասխանեց մարդը  
մինչ դուռէն դուրս  
կ'ելլէր և տղան հե-  
տաքրքրութեամբ վրան կը նայեր:  
Ճիշդ այդ միջոցին ծրարները գետին  
ինկան: Գանիկ անմիջապէս ցատկեց և  
գետնէն վերցուց զանոնք: “Տուէք  
բալխիրիս մէջ դնեմ և տանիմ զա-  
նոնք,” պողաց եռանդով, “ինձի եր-  
բեք բեռ պիտի չըլլան: Մեր տունը  
ձեր ճամբուն վրայ է:” “Գիտէք, հա՛:

ինչէն գիտէք թէ ես ո՛ր կողմը կը բնակիմ», ըսաւ մարդը, հիմա բոլորովին հետաքրքրուած: «Ինչու որ ես ձիւնին վրայ նշաններ տեսայ մեր տան քովերը, և զարմացայ թէ ինչէն եղեր էին անոնք, ուստի եկայ որ տեսնեմ»: Փայտէ սրունքով մարդը, իր երեսին և ձայնին պէս զուարթ, խնդաց բարձրաձայն: «Աղէկ, աղէկ», գոչեց մարդը մինչ ծրարները բախտիրին վրայ կը տեղաւորէր: «Եղաւ. շնորհակալ եմ, և ուրախ եմ որ այս բեռս կը տանիս, տղաս: Մենք դեռ երէկ եկանք հոս, և հարկ եղաւ որ այս առաւօտ մէյոք դուրս ելլեմ պէտքերու համար: Տակաւին մարդչեմ ճանչնար հոս, բայց եթէ այս քաղաքի մարդոց մէկ օրինակն ես, ուրեմն ազնիւ մարդիկ են անոնք»: Դանիկի հաճելի եկան մարդուն այս խօսքերը, և երկուքը սկսան դէպ ի տուն երթալ:

«Կարծեմ կ'ուզես խմանալ թէ ի՛նչ պէս եղաւ որ ես ասանկ սրունք մը ունեցայ», շարունակեց մարդը: «Շա՛մանակը չներեր որ ամբողջ պատմութիւնն ընեմ. միայն պիտի ըսեմ թէ ես միւս սրունքս կորսնցուցի ճակատամարտի մը մէջ ասկէ շատ տարիներ առաջ»: «Ատանկ է», պուռաց Դանիկ, հետաքրքրութիւնով լեցուած: «Եւ կը հաճիք օր մը ինձի պատմել տարր վրայով ամէն բան»: «Չեմ գիտեր», ըսաւ մարդը լրջութեամբ: «Պատերազմը սոսկալի բան է, տղաս, բայց ես քեզի քիչ մը պիտի խօսիմ անոր վրայով, եթէ ինձի այցելես: Ես հիմա կրնամ տանիլ բաներս: Շնորհակալ եմ քու ըրած օգնութեանդ համար, փոքրիկ բարեկամս»: «Ես կրնամ մինչև տուն բերել ասոնք, բան մը չէ», ըսաւ Դանիկ, և իր բեռը բերաւ պզտիկ տան մը դրան առջևը: «Իրաւ պզտիկ տուն մը ասանկ խոշոր մարդու մը համար», մտածեց ինքնիրեն:

Խոշոր մարդը և Դանիկ շատ մտերիմ բարեկամներ եղան իրարու: Եւ թէպէտ փայտէ սրունքով և զուարթ երեսով և ձայնով ձեր գինուորը շուտով շատ մը բարեկամներ ունեցաւ իր նոր բնակավայրին մէջ, սակայն անոնց ամենուն մէջ չէր գտնուեր մէկը որ իր սրտին մէջ այնքան տաք տեղ մը գրաւէր որքան այն փոքրիկ տղան ուրուն ծանօթացաւ այդ ձիւնոտ շաբաթ առաւօտը:

ԱՂՈՒԷՍԸ ՀՈՐԻՆ ՄԷՋ

Օր մը գայլ մը ասդին անդին պտուած ատենը խեց տարօրինակ ձայն մը որ կ'երևնար թէ հորէ մը կու գար: Գնաց հասկնալու համար թէ ի՛նչ էր պատճառը: Շուտով հասկցաւ, ինչու որ տեսաւ թէ խորունկ հորի մը մէջ ինկած էր իր հին բարեկամը, աղուէ-

սը: «Ո՛հ, իմ բարի, ազնուասիրտ բարեկամ», ըսաւ աղուէսը, «շատ ուրախ եմ քեզ տեսնելուս համար, գիտեմ որ ամէն ինչ որ կրնաս պիտի ընես զիս ասկէ դուրս հանելու համար: Շուտով կրնաս չուան մը բերել կամ ուրիշ կերպ մը գտնել և զիս ազատել»: «Խեղճ աղուէս, խեղճ աղուէս», ըսաւ գայլը, «շատ կը ցաւ իմ որ հող կը տեսնեմ քեզ, բայց կը խնդրեմ, ըսէ, ի՛նչպէս ինկար ասանկ ցաւալի վիճակի մը մէջ»: «Ո՛յ, ատանկ մի ըներ, գայլ բարեկամ», աղաղակեց դժբաղդ աղուէսը, «այդ տեղ մի կայնիր և վշտացնիր զիս ասանկ մեղմուկ խօսքերով երբ ես այսչափ կարօտ եմ օգնութեան: Խօսիր դիւրին է: Կրնաս միջոց մը գտնել զիս հորէն դուրս հանելու: Եթէ կըրնաս, կ'ուզե՞ս: Եթէ կրնաս և կ'ուզես, ժամանակ մի կորսնցնիր: Եթէ կրնաս, և չես ուզեր, բանդ գնա: Ես կրնամ սխալ բան մը ըրած ըլլալ, բայց դուն իրաւունք չունիս իմ սխալ երեսս տալու, մինչև որ ցուցնես ինչպէս խօսքով այնպէս ալ գործքով թէ իմ բարեկամն ես: Եթէ իմ բարեքս կ'ուզես, ինձի օգնէ: Եթէ դուն իմ տեղը ըլլայիր և ես քու տեղը, շնորհակալ պիտի ըլլայիր թէ որ ատանկ քաղցր խօսքեր խօսէի և նոյն ատեն գործերս ալ քաղցր ըլլային: Կամ իրական օգնութիւն մը ըրէ ինձի, և կ'ամ բանդ գնա»:

Մեր բարի կամեցողութիւնը ցուցնենք կարօտելոց օգնութեան գործերով մանաւանդ քան չոր խօսքերով:

ԻՐ ՄԵՇ ԲԱՐԵԿԱՄԸ

Սան Ֆրանսիսքոյի մէկ քարափին վրայ բազմութիւն մը ժողովուած էր շան մը ուրիշ շուն մը ազատելը դիտելու համար: Շունը իր ազատելու գործը կատարելէն ետքը իր ձամբան գնաց խելք ունեցող էակի մը կերպարանքովը, իբր մարդկային ընկերութեան կրթուած մէկ պաշտօնեան:

Պզտիկ շուն մը քարափէն ծոփն ինկաւ: Շնիկը ջուրէն դուրս ելլելու համար ամէն կողմ լողաց: Տեսնողները գանիկա աղատելու շատ կերպեր խորհեցան, բայց անոնց մէկն ալ չգործադրուեցաւ: Կ'երևնար թէ խելք կենդանին ջուրին մէջ ընկղմելու դատապարտուած էր, ինչու որ շուտով յողմեցաւ: Տեսարանը դիտողներուն մէջ գտնուող կիները սաստիկ կը մեղքնային չնիկը, բայց իրենց ձեռքէն բան մը չէր գար: ձեռք այն վայրկենին որ չնիկը ազատելու ամէն յոյս հատած էր, բազմութեան մէջէն շան մը հաշիւուն ձայնը լսուեցաւ, և ամենուն ուշադրութիւնը գրաւեց: Եւ ասա քարափին վրայ տեսնուեցաւ խոշոր նիւֆրնտէնտի շուն մը: Տեսաւ պզտիկ շունը ջուրին մէջ: Յաճ ձայներ հանելով ասդին անդին վազվառէց, և ետքը բոլոր հոն գտնուողներուն զարմանքը շարժեց, ինչու որ ջուրին մէջ

ցատկեց և իսկոյն դէպ ի չնիկը լողաց: Ակռաններովը բռնեց անոր վիզէն, և բաւական ժամանակ լողալէն ետքը, ծովեզերքի պատին նայեցաւ որ իբր հարիւր եարտար հեռու էր, և դէպ այն կողմը գնաց և ցամաք հանեց շնիկը: Յամաք հանելէն ետքը երկու երեք անգամ սուր ձայնով հայեց, իբր թէ պարծենալով իր կատարած նշանաւոր գործին վրայ: Բաւական ժամանակ անցաւ մինչև որ շնիկին վրայ ոյժ եկաւ և քայլել սկսաւ: Այս տարօրինակ տեսարանը դիտողներէն մէկը շոյեց սիրեց նիւֆրնտէնտի շունը և ըսաւ, «Այս շունը իմն է, և ես հիմա այս վայրկեանին հազար տողար վճարողին չեմ տար զանիկա»:

ԻՐՍՏ ՄԱՅՐ ՄԸ

Մանկապարտէզի վրայ գրուած սրուն զիբքի մը մէջ որ կը կոչուի «Մանկական Բնութեան Ուսումնասիրութիւն», հեղինակը նորէն կը հաստատէ այն հին ճշարտութիւնը թէ քիչ օգուտ կ'ընէ մանուկներու քարտէզ «Մի ըներ» բնարանին վրայ: Կ'ըսէ թէ անոնց աւելի կ'ազդէ «Լրէ» ըսելը:

Առաւօտ մը, կ'ըսէ, երբ դաս մը կու տայի խաղալիկ շէնքի փայտի կտորներով, երկայն շէնք մը ձևացուցիք կտորները իրարու քով և իրարու վրայ շարելով: Տղոցմէ մէկուն հարցուցի թէ ի՛նչ է այն: «Սեղան է, նախաճաշի սեղան», պատասխանեց պզտիկը: «Եւ կէք նախաճաշի սեղան խաղանք: Ես պիտի հարցնեմ ձեզի թէ պզտիկ տղաքները ուտելու ի՛նչ ունին: Ի՛նչ կայ քու սեղանիդ վրայ, Աննա»: «Ո՛հ», աղաղակեց Աննա մեծ հաճոյքով, «իմ տղաքս պաղպաղակ (տոնտուրմա), քաքար (պիսքիւի) և օշաբակ ունին»: «Կայ, վայ», պուռացի, ձեռքերս վեր բարձրացնելով: «Խեղճ պզտիկներ, նայեցէք անոնց սա անխոհեմ մայրիկին վրայ, որ չգիտեր իր տղոց նախաճաշի համար աղէկ և առողջարար կերակուր տալ: Անոնք ի՛նչպէս պիտի կրնան մեծնալ և զօրանալ ատանկ կերակուրով: Քու սեղանիդ վրայ ի՛նչ կայ, Գեորգ»: «Իմ տղաքս ունին հաց ու կաթ, վարսակի խիւս (օթմիլ) ու սեր և եփուած փաթաթէս», ըսաւ խելացի պզտուիկ հայրը: «Ա՛հ», ըսի գոհունակութեան ձայնով մը, «ասա մայրիկ մը որ գիտէ թէ ի՛նչպէս խնամելու է իր գաւակները»: «Ո՛հ», ըսաւ փոքրիկ Աննան, «իմ տղոցս մայրիկը սրահն եւ կաւ, և երբ տեսաւ թէ ի՛նչ կ'ուտէին անոնք, պաղպաղակ սեղանին վրայէն առածին պէս մէկ կողմ նետեց»:

Տարեկան բաժանորդագրութեան համար, ամէն տեղւոյ համար

Ամերիկայի Մեխիկոյոյ Արասնատեր ձ. Տնօրէն—Խմբագիր Հ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԼԻ  
P. SODAKIS U. SUND  
Ֆինանսները Եղուշու, Ամերիկան իսան